

ՀԱՆԴԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ

ՍՐԲՈՅՆ ԱՐԻՍՏԻԴԵՍՅ ԱԹԵՆԱՅԻՈՅ ԶԱՏԱԳՈՎՈՒԹԵՆԷՆ

ԳՏԵՈՒՄԻ ՀԱՏՈՒՄԻ ՄԸ

Ինչուան'ի 1878' նախակարգ ջատա-
գովաց մէկուն՝ սրբոյն Արիստիդէայ, ա-
նունը միայն և իր երկասիրութեան
խորագիրը ծանօթ էր բանասիրաց : —
Ասոր վրայ առաջին խօսողն կամ թէ
յիշատակողն Եւսեբիոս կեսարացին է :
Յետ յիշելոյ թէ սուրբ կուսադատոս,
Աթենքի եպիսկոպոսն, առ ինքնակալն
Ագրիանոս բան պատասխանատուու-
թեան մատոյց, կ'աւելցնէ թէ « Եւ Ա-
րիստիդէս իսկ այր հաւատացեալ յուս-
մանէ աստի մերմէ՝ ըստ նմանութեան
կուսադատեայ մատոյց Ագրիանոսի դիր
պատասխանատուութեան վասն կրօ-
նից մերոց . և սոյն իսկ այս գիրքը գը-
տանի մինչև ցայսօր ժամանակի առ բա-
ղումն ¹ » :

Յետ Եւսեբեայ՝ սուրբն Հերոնիմոս 'ի
կարգս եկեղեցական մատենադրաց պա-
տուաւոր տեղի մը կու տայ սրբոյն Ա-
րիստիդէայ. « Արիստիդէս, ասէ, ակե-
նացի այր իմաստասէր ճարտարախօս,
ընդ աղաբողոնաւ իմաստասիրի՝ աշա-
կերտ Քրիստոսի, զրեալ զբան հաւա-
տոյ վարդապետութեան մերոյ 'ի նմին
ժամանակի յորում՝ և կուսադատոս, մա-
տոյց առ Ագրիանոս ինքնակալ, այս իսկ
է պատասխանատուութիւն վասն քրիս-
տոնէից, որ մինչև ցայսօր պահի . և առ
բանիբունս ցոյց է հանճարոյ նորա » :
(կարգ երևելի մատեն. եկեղ. զԳ. Ի) :
Նոյն մատենագիրն զրելով առ Մագ-

նոս (Թղ. Զ. առ Մագ.) կ'աւանդէ թէ
« Արիստիդէս իմաստասէր, այր ճար-
տարախօս, զպատասխանատուութիւն
մատոյց ինքնակալին յեռեալ բանիւք
իմաստասիրաց » :

Հինգերորդ դարու մէջ Պօղոս Որո-
սիոս իր Պատմութիւն աշխարհի գը-
րուածքին մէջ զԱրիստիդէս կոչէ « այր
լի հաւատով և իմաստութեամբ » : (Պատմ.
Է. 13) : — Նուիրական բացատրութիւն
մ'է որ մատնացոյց կ'ընէ այն մարդն՝
յորում սերտիւ միացած է քրիստո-
նէութիւնն իմաստասիրութեան հետ :

Քիչ մը ետքը երանելին Պետա զձա-
տագողին իր վկայաբանութեան մէջ մը-
տուց « յԱթէնս երանելի խոստովանո-
ղին Արիստիդէայ » . և անոր տօնը օ-
գոստոսի 31ին կը գնէ :

Ի՞նչանք վար ը և Թ դար, Ագոնի և
Ուսուարտի վկայաբանութեանց մէջ
մեծ ջատագովին վրայ յիշատակու-
թիւն մը գտնալու համար : Հոկտեմ-
բերի 3ին սրբոյն Դիոնիսիոսի արիոս-
պագայւոյն վկայաբանութիւնը պատ-
մեղէն վերջը, Վիեննայի արքեպիսկո-
պոսն կ'աւելցնէ . « Այսպէս վկայէ
Արիստիդէս ակեանացի, այր իմաստու-
թեամբ և հաւատովն ոքանչիւր, 'ի բանն
զոր արար վասն քրիստոսական կրօ-
նիցս : Այս երկասիրութիւն յոյժ 'ի պա-
տուի ևս Աթենացիս՝ համարեալ է ի-
բրև զմի յերեւելագունիցն յիշատակաց
հնութեան : Հմտագունիցն Յունաց է
այս վկայութիւն » : (Ս. Այոն արքե-

¹ Պատմ. եկեղ. Դպ. Դ. 42. Գ. էջ 241 :

պիս . Վիենն . Վիսայաք . Հոկտ . ամիս . Գ . օր) :

Ուսումարդ զԱրիստիդէս հաւատոց աւանահօր պաշտպանողաց դասուն մէջ դնելէն գոհ չըլլալով՝ սրբոց ցանկին մէջ անցուց, ինչպէս Պետա ըրած էր : Իւրացընէ կը կարգաւք իր վկայարանութեան մէջ յ34 Օգոստոս . « Այսօր յԱթէնս տօն է սրբոյն Արիստիդէայ , առն մեծի հաւատովն և իմաստութեամբն , որ մատոյց առ Ագրիանոս ինքնակալ գերկասիրութիւնն գրեալ 'ի պաշտպանութիւն քրիստոսական կրօնիցս . և եցոյց բանիւ ճարտարութեան բուն իսկ յանդիման կայսերն , թէ չիք Աստուած բայց 'ի Յիսուսէ Քրիստոսէ » : (Ուսումարդ . միանձ . Օգոստ . 34 Վիսայաք .) :

Արիստիդէս իմաստասիրին վրայ գիտցածնիս այս է . աթենացի իմաստուն մի է : Արուեստից և իմաստութեան այս պայծառ մայրաքաղաքին մէջ , ուր տակաւին կը հնչէր Առաքելոյն խօսքն , Արիստիդէս՝ ինչպէս իրմէ քիչ առաջ Դիոնիսիոս արիտպագային , քրիստոնեայ եղան : Բոտ վկայութեան Աղոնի , որ սրբոյն Դիոնիսիոսի կենաց և մահուն զայն վկայ կը բերէ , պէտք է կարծել որ Արիստիդէս՝ Արիսպագացոյն հետեւող էր և անոր դպրոցէն : Ագրիանոս կայսեր ժամանակն հալածանքն կ'ըլլայ : Երկու Աթենացիք զկեղեցիցն պաշտպանելու կ'ըլլան , առաջինն՝ Կուաղրատոս կամ Կուղրատոս , ետիկոպոս քաղաքին , « ուսեալ յառաքելոց և 'ի չնորհա իսկ մարգարէութեան » , ինչպէս կ'ըսէ Եւսեբիոս , աւետարանական ասպարիղին մէջ կը կանգնէ իր ջատագովականն , որուն հաւատիքն իր չորս կողմէն կը գտնայ . որովհետեւ ըստ նոյն պատմագրին « մինչև 'ի մեր ժամանակս , ասէ , կացին մնացին ոմանք 'ի բժշկելոյն 'ի Յիսուսէ Քրիստոսէ » : (Պատմ . եկեղ . Գ . 4) : Նոյնպէս սուրբն Հերոնիմոս իր խորհրդածէ թէ սուրբ Աւետարատոսի գրութեան հեղինակին մարտիր վարդապետութեանը կը վկայէ , որ անշուշտ նախնական աղբիւրներէ կը բղխի : (Հն .

րուն . Կարգ երևելի մատեն . եկեղ . Գ . ԺԹ) : Արիստիդէս նոյն իսկ իր թշնամեաց դիրքէն ալ տարբեր դիրք չի բռննեց : Տեսանք արդէն որ զԱւետարանն բնորոնելով հանգերձ՝ փրկիսովայաութեանէ յետս չկեցաւ , և փրկիսովայական ազաբողոնն ալ կը պահէր ըստ վկայութեան նոյն մատենագրին : Իմաստասէր՝ առ իմաստասէր կայսր մը ուղղելով իր խօսքը , զինքը համոզելուն տրեւագոյն միջոց սեպեց՝ իր լեզուովն խօսիլ անոր հետ : Ասկից է ահա հին իմաստնոց վկայութիւններն որ զարդ , ազնուութիւն և ուժ կուտան իր պատասխանատուութեան . ասկէ է նոյնպէս լեզուին ճարտասանական այն գեղեցկութիւնն , այնքան 'ի ժամանակին սիրելի Յունաց . աւելի սիրելի Աթենացւոց , որ իր ատտիկեան անմահ յստակութեամբը կը կախարդէր զսեւիս , զորոնք աւելի մտադրութեամբ կը զարթունցանէր ի լուր ճշմարտութեան , և որ յետ ժամանակաց անգամ հիանալի էր չորրորդ դարու կրթմանը բուն :

Միակերպ և մի և նոյն ճամբան բռնեցին առաջին ջատագովք : — Յուստինոս վկայ , Աթենագոր , Թէոփիլոս անտիոքայի , առանց խղճունութեան արտաքին հեթանոս հինքերէն կ'առնուն կը քահանայութիւնն , մէկ մ'անշուշտ անոնց մէջ հեթանոսութեան դէմ զէնք գտնալու համար , անոր դէմ դնելով Աւետարանին գերադոյն փանմութիւնը . մէկ մ'ալ զհեթանոսութիւնը բնական ճշմարտութեանց վկայ բերելու համար , որոնց պայծառութեան խաւար զիշերը անցեր էր : Արիստիդէս որ առաջ բացաւ այս ճամբան , ոչ միայն երիցագոյնն է 'ի կարգս ջատագովաց , այլ և անոնց վարժապետն : Ինքն է պարագլուխ և դասապետն : Մեծապէս ցաւալի է որ ինչուան հիմայ այսպիսի անդին յիշատակարան մը չհասաւ ձեռքերնիս : Աղոնի և Ուսումարդի ժամանակն կարարգեղ : Լիւմպէրի կարծիքն այդ՝ այս երկու մատենագրաց գրութեանց վրայ հաստատեալ : Աղոն կ'ըսէ թէ գրութեան

շատ յարգի է Յունաց, ենթադրել տալով թէ հեղինակի ժամանակին Յունաց համար է խօսքն. Ուսուարդ երբ կ'ըսէ թէ Արիստիդէս սրբոյն Դիոնիսիոսի արիսպագացոյն մարտիրոսութիւնը կը յիշատակէ, կարծես թէ ծանօթ իրական գրուածք մը կ'ականարկէ: Այս ժամանակէն ետե գեղեցիկ երկասիրութեանը հետք մ'ալ չկայ. ընդունայն է փոփոխական Մատենադարանին մէջ փնտրուել. Միջին դարուն մէջ անհետ կ'ըլլայ: Իրաւ է թէ ատեն մը կարծեցիկ Մոսայի մենաստանի մը խորշէ մը այս գրուածքը դուրս պիտի ելլայ: Գաղղիացի ճանապարհորդ մը, Տը Լա Կիւլըդիէր, գրած էր թէ « քանի մը յոյն կրօնաւորք կը պարծէին թէ Մէտէլլիի գրատան մէջ, որ Աթենքէն վեց մըն հեռու է՝ կը պահեն այս ջատագովութիւնը »: Ստեփանոս Լըմոյէն սիրով կ'ընդունի այս կարծիքն և կը տարածէ այս յոյսը: Պօղոս Գոլոմիէ ալ որ նշանաւոր է արեւելից վրայ ունեցած տեղեկութեամբք, կը կարծէ որ ճմարտութենէն շատ հեռու բան չէ: Բայց շուտով հարկ եղաւ ետ կենալ այս յոյսէն, երբ տեսնուեցաւ թէ որչափ որ գիտնականք կը ստիպեն զկրօնաւորսնոր իրենց գանձը հրապարակեն, նոյնչափ անոնք խայտառակաբար կը լռեն. այս լռութիւնը խոստովանել մ'էր իրենց աւելորդ շատխօսութիւնը կամ պատրանքը:

Խնդիրն այս վիճակի մէջն էր, երբ 1878ին Ս. Ղազարու հայ մենաստանին Միսիթարեան հարք՝ Արիստիդէս իմաստասիրին հատուկտիրը հրատարակեցին հայ լեզուով, գիմացը լատին թարգմանութեամբ: Ծանօթ է ամենուն թէ այս կրօնաւորք հաւատարիմ իրենց երջանիկ հիմնադրին աւանդութեանը՝ ուրիշ բան չունին իրենց սրտիցը մէջ բայց եթէ խնդրել, քննել և տարածել պատմութեան կամ սրբազան գիտութեան յիշատակները, ուրոնցմով ճոխ էր երբեմն հայ եկեղեցին: Յառաջաբանին մէջ որ առ բանասէրս, Լիւմպէրի Գննադատական

պատմութիւն հարց (Lumper. Historia critica patrum) գրուածքին մէջ գրած ամբողջ տեղեկութիւնը քաղելէն ետքը, թէպէտ առանց անունը յիշատակելու, կ'աւելցընեն հրատարակողքն լատիններէն յառաջաբանին մէջ. « Բարեբաղդ իմն հանդիպմամբ կամ լաւ ևս խորհրդով իմն աստուածային տեսչութեան՝ որ զողոյն իսկ վէպ ազգն յառաջ քան զայլսն ամենայն ընկալաւ 'ի ծոց քրիստոնէութեան, 'ի նշխարեալ մնացորդս մատենադրութեան նորին ընդ այլ գրաւոր վաստակս, որոց վայրապար խնդրին տակաւին յունական սկզբնագիրք, և կարեւոր իմն հատուած 'ի ջատագովութենէն պահալ Արիստիդէսայ՝ 'ի ձեռս մեր եհաս: Այս պատահիկ առանց երկբայութեան յոսկեղէն դարուն 'ի հինգերորդի՝ յեղաւ 'ի հայ բարբառ, ապա 'ի մագաղաթեայ 'ի տաճաներորդ դարու գրեալ օրինակի մինչև առ մեզ պահեցաւ, զոր արդ հանեալ 'ի լոյս և 'ի լատին փոխեալ հաւատարմութեամբ՝ ընծայեմք ամենեցուն որ զփառս եկեղեցոյ սիրեն և յարգեն »:

Վնեւտկեան հարց վկայութեան համեմատ՝ վատաւ իրենց գիտնական երաշխաւորութե վրայ՝ յօժարութեամբ կ'ընդունինք այն հատուածին սեռն վաւերականութիւնը, ուր կը գտնանք նախնի դարուց ոգին և եռանդը: Սակայն մենք զեռ աւելի շնորհակալ կ'ըլլայինք իրենց ջանից համար, եթէ առ բանասէրս ուղղեալ յառաջաբանին մէջ այս հատուածին աղբերը, անոր գիտին, այս երկար մոռացութեան պատճառին և վերջապէս անոր գրագրական (bibliographique) պատմութեանը վրայ աւելի որոշ տեղեկութիւններ տային: Անոր վաւերականութեան ի նըպաստ այս պատճառներն անհրաժեշտ կարեւոր էին բոլոր գիտնական աշխարհին հաւատարմացնելու այն պատահիկը, որ՝ նկատելով իր փոքր քանակն ինքն ներքին բաւական երաշխաւորութիւններ չունի, որպէս զի ամենուն ընդունելութեան կնիքն յինքն կրէ:

Արիստիդէայ հատուածն զոր մինչև
ցարգ ինչ որ գիտեմ՝ դեռ ուսումնա-
կան հանդէս մ'ալ չձանօթացոյց 'ի
Գաղղիա, հայերէն չորս երես է՝ Մխի-
թարեանց տպարանը տպագրուած :

Խորագիրն է ինքնակալի Ադրիա-
նոսի կայսեր յԱրիստիդէայ փիլիսո-
փայն արքեմագոս : Շատ հաւանական
է որ յունարէն սկզբնագրին վերնագիրն
աւելի որոշ եղած ըլլայ, առ կայսերս
ուղղեալ քաղաքաւարական ձևոյն հա-
մեմատ, ինչպէս է Յուստինոսի և Աթե-
նագորայ գրուածոց մէջ : Կ'երևնայ թէ
այս խորագիրն հայ գաղափարին զըլ-
խակարգն է, որ ճառին հեղինակն և
առ ո՛ր ուղղելն կը ցուցնէ :

Չեռքերնիս հասած ջատագովութեան
մասն Ս. Հերոնիմոսի ստորագրածն չէ,
որ շի էր բանիւք իմաստասիրաց : Եւ
որոյ կորուստն այնչափ աւելի ցաւալի
պէտք է ըլլալ մեզի, որչափ որ այն հե-
տաքրքրական հաստուածին վաւերակա-
նութիւնն առաւել ևս պիտի ճանչցուէր
այսու նշանաւ : Գտնուած մասին մէջ
քրիստոնէայ իմաստասէրն հեթանոս
հին աստուածածանօթութեան՝ Սուրբ
գրոց և Աւետարանի աստուածաբանու-
թիւնը կը դիմագրէ : Յայսմ Արիստիդէա
ինքնին թատրոնի վրայ կ'ենէ : անձամբ
իր հաւատքը կը վերլուծէ և գրեթէ կը
գծէ այն ճամբան զոր իր միտքն ըրեր էր
առ Աստուած հասնելու համար, ի պատ-
ճառաւորութենէ յապացոյցն՝ յարարա-
ծոց առ Սրարին կը վերամբառնայ :
Շատ ճոխ և վսեմ լեզու մը կը բանե-
ցնէ. կարծես թէ Բապտիս, Ֆենէլոնի և
Կարդեսիոսի խորհրդածութեանց վսեմ
էջ մը կը կարդանք :

« Ես, ով թագաւոր, խնամակալու-
« թեամբ Աստուծոյ ստեղծեալ՝ մտի
« յայխարհս, և տեսեալ զերկինս և
« զերկիր և գծով, զարեղակն և զյու-
« սին, և զաստեղս, և զամենայն արա-
« րածս, սքանչացեալ զարմացոյ ընդ
« կազմած յաւիտեանիս այսորիկ. և ի
« մացեալ գիտացի, եթէ այստարհ և ա-
« մենայն որ'ի սմա՝ հարկաւորութեամբ
« և բանաւորութեամբ վարին և շարժին.

« և է ամենայնի վարիչ և կաղմիչ Աս-
« տուած. քանզի որ վարէն զօրաւոր է
« քան զայն որ վարին և շարժին » :

Ահա բնական աստուածածանօթու-
թիւն. ահա հայեկին անտեսին՝ ըմբռ-
նեալ տեսանելաւորուն համար կ'ըսէր
Ս. Պօղոս իր առ Հովմայեցիս թղթոյն
մէջ, իմաստասիրաց երեսը զարնելով
իրենց անարդարանալի յանցանքը որով
աչքերնին գոցեցին չտեսնալու համար :
Մեր իմաստասէրն դարձած 'ի հաւատս՝
այ ասոնց կարգէն չէր : Բայց այլ է ճան-
չնալ զԱստուած, այլ է զայն բացատրել,
արդէն ըսած է Պղատոն, ('ի Տրա-
մախօսութեան) : Արիստիդէա կը շա-
րունակէ .

« Խնդրել վասն այնր՝ որ խնամակա-
« լուն է և վարէ զամենայն, ինձ կարի
« անհաս և դժուարագոյն թուի. և ճըշ-
« գրութեմ վասն նորա ստուգապէս՝ ան-
« հաս և անպատում է, և ոչ օգուտ
« բերէ. քանզի անբաւ և անքնին, և ան-
« հաս է յամենայն արարածոցս՝ բնու-
« թիւն նորա : Բայց միայն գիտելի է, և
« թէ որ զայս ամե նայն արարածս ինա-
« մակալութեամբ իւրով կառավարէ,
« նա է տէր և Աստուած և արարիչ ամե-
« նայնի, որ զամենայն երեւելիսս կազ-
« մեաց բարեբարութեամբ իւրով և
« շնորհեաց զազիս մարդկան : Արդ ար-
« ժան է զնա միայն Աստուած պաշ-
« տել, և փառաւորել, և զմիմեանս սի-
« բել՝ որպէս և զանձն իւր » :

Պէտք չէ մոռնալ թէ կայսրն՝ որուն
կ'ուղղէր Արիստիդէա իր խօսքը, ստո-
յիկեան էր : Արդ ո՞րն էր ստոյիկեան
գրութեան Աստուածն : « Չկրնալով,
կ'ըսէ Լակտանտիոս, անոր կարողու-
թիւնը և մեծվայելութիւնն ըմբռնել,
զայն ախարհի հետ չփոթեցին, այս-
ինքն իր ձեռագործին հետ » : (Աս-
տուաճայիկ. առմ. է.) : Աստուածու-
թեան վրայ ունեցած ստոյիկեանց գա-
ղափարին ճշգրիտ համապատասխանն
է այս : Սենեկա կարգալու է. քսան
տեղ զընութիւն՝ բնութեան Աստու-
ծոյն հետ կը չփոթէ, կամ թէ զանոնք
իրարմէ չի զանազաներ իմաստասէրն .

« Զինչ այլ է բնութիւն՝ եթէ ոչ Աստուած և աստուածային բան յարեալ և կցեալ ընդ ողջոյն իսկ աշխարհի և ընդ մասունս նորա : Զնոյն ինքն եթէ և բազդ ասասցես, ոչինչ ստես : Զիք ինչ առանց նորա . զգործս իւր ինքն լցեալ կատարէ : Ոչ բնութիւն առանց Աստուծոյ, և ոչ Աստուած առանց բնութեան . նոյն են ընդ իրեարս և ոչ իւիք որոշին : Այսպէս ուրեմն եթէ բնութիւն, եթէ բազդ, եթէ ճակատագիր ասես, ամենեքին մէն մի անուն են նո. բին Աստուծոյ » . (Սեւեկ . յղ . Բաղեթ . Դ . 7 .) : Մարկոս Աւրելիոս կայսր և Եպիփանոս իմաստասէրն ալ նոյնպէս զԱստուած տիեզերաց հետ կը նոյնացունեն . Այս իմաստասիրութեան յատակին մէջ դետորէն կ'ընթանայ անայլ լայլակ նոյն համայնաստուածութիւնը, որուն Աստուած—բնութիւնն ոչ անձն է և ոչ պատճառ, այլ որ անծանօթ անսահման իմացականութիւն մ'է, յաւիտենական անդունդ մը, ուսկից կ'ելլէ և ուր կը մտնէ ամենայն ինչ, գոյութիւն մը առանց պատճառի իւրոյ լինելութեան, աստուածութիւն մը որ վերացեալ կերպով ամենայն ինչ է, այլ իրապէս ոչինչ :

Ահա այս անանձնաւոր, անծանօթ Աստուծոյն դիմացը կ'ելլէ Արիստիդէս և առաջի Ազրիանոս կայսեր այս աստուծոյն կ'ընդգլխադրէ քրիստոնէից Աստուծոյ վրայ ունեցած դաւադարն, որ այլ է 'ի տիեզերաց իր բոլոր ստորագելեօք, զորս հռչակելն իրեն շատ հաճոյական է :

« Այլ այսչափ միայն դիտելի է վասն « Աստուծոյ, եթէ ոչ յուստեքէ եղեալ « է, և ոչ ինքն զինքն արար . և ոչ յուսմէքէ բովանդակի, այլ ինքն բովանդակէ զամենայն : Ինքնածին տեսիլ, և իմաստութիւն անմահ, անսկիզբն « է և անվախճան, անանց և անմահ . կատարեալ է և անկարօտ, և զամենեցուն կարօտութիւն ընու : Ինքն ինչ « յուսմէքէ ոչ կարօտանայ, այլ ամեն « նայն կարօտելոց տայ և ընու : « Ինքն անսկիզբն է . քանզի ամեն

« նայնի որոյ սկիզբն է՝ և կատարած « գոյ, ինքն անանուն է . քանզի ամեն « նայնի որոյ անուն է՝ յայլմէ է ստեղծ « ծեալ և արարեալ : Գոյնք և ձեք՝ նու « բա ոչ են . զի յորում այդ գտանի՝ նա « է որ ընդ չափով և ընդ բովանդակու « թեամբ անկանի : Արական և իզական « յայնմ բնութեան ոչ կայ . դի յորում « այդ կայ՝ նա է որ ընդ մասամբք ախ « տից է : Ընդ երկնիւք նա ոչ է բո « վանդակեալ . քանզի անդր է քան « զերկնս . և ոչ են մեծ քան զնա եր « կինք . քանզի երկնիւք և ամենայն ա « ռարածք՝ ընդ նովաւ են բովանդա « կեալ : Ընդդէմ և հակառակ նմա ոչ « ոք է . եթէ ընդդէմ ոք գտանի՝ երեք « թէ ընկերակից նմա լինի : Անշարժ է, « և անչափ է, և անպատում . քանզի « չիք այն տեղի թէ ուստի յոր վայր « շարժիցի : Եւ ոչ չափեալ բովանդակի « ուստեք և պատի . քանզի ինքն է որ « ընու զամենայն . և անդր է քան զա « մենայն երեւելիս և աներևոյթս : Բար « կութիւն և ցասումն 'ի նմա ոչ կայ . « քանզի ոչ գոյ 'ի նմա կուրութիւն . « այլ ամենեւեմ բովանդակ մտաւոր է . « և վասն այսորիկ զանազան սքանչե « լեօքս և ամենայն բարութեամբք՝ զա « ռարածս հաստատեաց : Ոչինչ պիտոյ « են նմա զոհք և պատարադք և նուէրք . « և ամենայն որ ինչ է երեւելի յարա « ռածս՝ ոչինչ պէտք են նմա . քանզի « զամենեցուն զպէտս ընու և կատարէ, « և անկարօտ փառաւորեալ է յամեն « նայն ժամ :

« Արդ շնորհեցաւ ինձ յԱստուծոյ՝ ի « մաստութեամբ ասել վասն նորա . որ « չափ ես եղէ բաւական՝ ասացի . այլ « ոչ եթէ որչափ են անքնութիւնք մե « ծութեան նորա՝ հասանել կարիցեմ . « բայց միայն հաւատովք փառաւորեալ « երկրպագեմ » :

Երբ այսպիսի դերազանցապէս հոգեւոր աստուածաբանութեան մը վսեմ խորհրդածութիւնները կը կարգաւորուր իմաստասիրութիւնն կը սկսի յաւիտենական իմաստութեան յայտնութեանց գիտնական կերպարան տալ,

բնական կերպով միտքս Արիստոփանէս-
ցոյն ընծայուած գրողը կ'երթայ, մաս-
նաւորապէս Յաղապա աւստոնաւային
աւստոնացի ճառին . կը յիշեմ այն ատեն
թէ Արիստոփանէս ակնհայտ է, Դիոնի-
սիոս արիստոփանէսցոյն աշակերտ եղած .
և եթէ այնչափ հակառակելի ինչդիրն՝
թէ այն գրուածոց հեղինակն Արիստոփ-
անէսն է՝ կարելի ըլլայ պաշտպանուիլ,
իրեն աշակերտ սեպուած մէկուն այս
հատուածն՝ իրենին այնչափ նման՝ խըն-
դրոյն 'ի նպատակ փաստ մ'ալ կ'աւել-
ցնէ :

Աստուծոյ վրայ երես մը բան խօսե-
լէն վերջը Արիստոփանէս կը սկսի քննել
մարդկային ազգի ցեղերը, որ ազգերը
այս համարութիւնները կը ճանշան և
որոնք ոչ : Եւ այսպէս կը ճոխաբանէ .

« Եկեացուք այսուհետև յազգս մարդ-
« կան, և տեսցուք՝ որք իցեն ընդունիչ
« ասացելոց համարութեան . և ո՞ր
« իցեն միտքեալքն : Յայտնի է մեզ,
« ով թագաւոր . քանզի չորք ցեղք են
« ազգաց մարդկան . ոչք են, Բարբա-
« րոսք, և ոմանք Յոյնք, և ալլք Հրեայք,
« և են որք քրիստոնեայք են : Իսկ հե-
« թանոսք և բարբարոսք ազգահամա-
« ըին 'ի Բէեղեայ, 'ի Կրոնեայ, և յեւր-
« րայ, և ալ 'ի բազում աստուածոց իւ-
« րեանց : Իսկ Յոյնք ասեն Չևս՝ որ է
« Դիոս . և ազգահամարին 'ի Հելենոս,
« և Քսիլթոս, և մի ըստ միոյն, Ելլաս,
« Ինպրոս և Փորոնէոս, և ևս 'ի վերջէ՝
« 'ի Դանայէ եգիպտացոյ, և 'ի Կադ-
« մոսէ Սիդոնիացոյ, և 'ի Դեոնիանոյ
« Թերեսացոյ : Իսկ Հրեայք ազգահամա-
« ըին յԱբրահամէ . և Աբրահամոյ որդի
« ասեն Գիսահակ, և Իսահակայ զԵա-
« կովբ . և Յակովբայ գերկտասանն,
« որք փոխեցան յԱսորեաց յեգիպտոս,
« անտի անուանեցան ազգք Եբրայե-
« ցոց, յօրինադրէն իւրեանց . և ե-
« կեալք յերկիրն պարգեաց՝ անուանե-
« ցան ազգք Հրէից » : Այսպէս կը հասնի
մինչև 'ի Քրիստոս և կ'ըսէ . « Իսկ քրի-
ստոնեայք ազգահամարին 'ի Տեառնէ Յի-
սուսէ Քրիստոսէ » . և այս կերպով կ'ա-
ստուածաբանէ Քրիստոսի համար : Սա

« ինքն է որդի Աստուծոյ բարձրելոյ, որ
« յայտնեցաւ Հոգւով սրբով . յերկնից
« իջեալ . և 'ի Կուսէ եբրայեցոյ ծնեալ .
« մարմին իւր առեալ 'ի Կուսէն, և յայ-
« տնեալ բնութեամբ մարդկութեանս՝
« որդին Աստուծոյ, որ յաւեաաւոր յիւր
« բարութիւնն՝ զշախարհս ամենայն
« որսացաւ կենսատուր քարոզութեան
« իւրով : Սա էր որ ըստ մարմնոյ ծնաւ
« յազգէն Եբրայեցոց յաստուածա-
« ծինն 'ի Կուսէ Մարիամայ : Սա ըն-
« տրեաց զերկտասան աշակերտսն ,
« որ տնտեսական լուսաւոր համարու-
« թեամբն իւրով զաշխարհս ամենայն
« աշակերտեաց : Եւ խաչեալ բեռեւ,
« ցաւ 'ի Հրէից . և յարուցեալ 'ի մեռե-
« լոց վերացաւ յերկինս . և արձակեալ
« զաշակերտսն ընդ ամենայն տիեզերս,
« և վարդապետեալ զամենեսեան աս-
« տուածաբանչ և մեծիմաստ դարմա-
« նալեօք . որոց քարոզութիւնն մինչև
« ցայժմ ծաղկեալ պտղաբերի, և կոչէ
« զամենայն տիեզերս 'ի լուսաւորու-
« թիւն » :

Ահաւասիկ Արիստոփանէս հատուա-
ծոյն ամբողջութիւնը : Չեմ տարակուսիր
թէ իր թերակատար ըլլալուն պատճա-
ռաւ՝ եկեղեցական գիտութեան համար
մեծ նշանակութիւն ունեցող յիշատա-
կարան մը չէ, և շատ կենդանի լոյս մը
չի ծագեր առջի դարուն եկեղեցոյ վը-
րայ . բայց գոնէ ինչ որ է՝ մեր հաւա-
սոց մեծ և նոր երաշխաւորութիւն մ'է :
Այսպիսի անձի մը գրութեան հա-
տուած մը կ'ընծայէ՝ զոր ցաւով արտի
ամբողջապէս աւերակաց տակը թա-
ղուած կը նկատենք, որոց անուանքը
նախընթաց դարուց անփոյթ անհոգու-
թիւնն ծածկեց և թաղեց անոնց ան-
թիւ հոյակապ գործերով : Արդեօք չե՞նք
կրնար յուսալ որ այս պատառիկն օգնէ
պիտի գտնալու օր մը գործոյն ամբող-
ջութիւնը, և եթէ արդ իսկ եկեղեցոյ
առջի դարուն անգին գրուածոց շատե-
րը լրացան, ինչպէս Կղեմայ Հոռովմայ
հայրապետին թուղթն, Հերմայ Հովիւն,
Միլիտոն սարդիկեցոյն գրուածքներէն
մէկն, տեսնանք պիտի նաև առաքելա-

կան դարուն վերաբերող գրուածի մը ամբողջանալն, սուրբ Արիստիդէս աթե- նացւոյն շատագոյնութեան :

Այս գիտնականն և քննադատական գիտողութիւններն՝ ուսումնական հան- դիսի մը մէջ հրատարակեց Գերապ . վարդապետն Պօնար՝ Օրլէանու պա- տուեալ կանոնիկոսն, Լիլ քաղաքին ուղղափառ համալսարանին ուսուցիչ, վարդապետ աստուածաբանութեան և միանգամայն գեղեցիկ դպրութեանց . զոր համադրային գիտնականն և բանա- սէր եկեղեցականաց և աշխարհակա- նաց մեծ հաճութիւն պատճառելու յու- սով՝ ուղեցինք հրատարակել 'ի Բազ- մավիպիս հայ բարբառով . Ուրիշ քա- նի մը քննադատք ալ, նաև 'ի նորա- ղանդից, խօսեցան և գրեցին այս նիւ-

թոյս վրայ 'ի նպաստ և հակառակ կար- ծեաց հրատարակողաց և հատուածոյն վաւերականութեան, զոր պիտի տես- նենք :

Գալով հայ թարգմանութեան, որ սքանչելին է յիւրումսեռին, տեղեկու- թեան և քննադատական բան մը չենք կրնար աւելցնել, արդէն յառաջա- նին մէջ բաւականն ըսուած է . բայց բառք, բացատրութիւնք, դարձուածք բանից, ողորկութիւն և յստակութիւն անման, և ամենայն ինչ որ ընտիր մա- տենագրական լեզու կը կազմեն՝ յայտ- նապէս կը վկայեն թէ Մենդոց դրոց թարգմանչին ձեռք մը կայ, Ս . Սահա- կայ և մեսրոպեան կիրթ ճաշակն, մեղմ և ճկուն գրին կը խօսի . շատ է անգամ մը կարգալ այս բոլոր ըսած- նիս լիովին իմանալու համար :

Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն

իննետասներորդ դարու քննադա- տութիւնն իր այնչափ բարեմասնու- թեանց հետ բազմադոյն ալ վրիպանք- ներ ունի, որ շատ կ'աղօտացնեն իր ստոյգ փառքն և երբեմն թերևս կ'ո- չընչացնեն ալ : Այս վրիպանաց մեծա- գոյնն է ազգային պատմութեանց մէջ և պատմագրաց վրայ միշտ անընտրող հայրենասիրութիւն մը նկատել, և ազ- գային համաձայն բանական լուսէն . քննադատն իր բանին լոյսը աւելի պայ- ծառ և ընարող համարելով՝ անձամբ դատաւոր նստիլ ոչ միայն պատմա- գրական դիպաց առ մեզ հասեալ ներ- կայ վիճակին, այլ հազարաւոր ամաց մարդկութեան խղճին ու մտաց ալ . այս եղեռն է անքաւելի քննադատական ա- րուեստին մէջ :

Այս յոխորտ ազատութիւնն և ուրիշ այլ կարևոր պատճառք՝ կը ստիպեն զմեզ կուղշմիտ գերմանացւոյն Ազա- թանգեղոսի վրայ ըրած քննադատու- թիւնն դադրեցնել 'ի Բազմավիպիս . վասն զի ընթերցողն հատուած հա- տուած կարդալով՝ քննադատին ամբողջական ուղղութիւնն կամ խոտորու- թիւնը չի կրնար ճշդիւ ըմբռնել . թերևս բազմաց ալ հայրենասէր սրտին ցաւ բերէ կամ յանդգնութիւն երևնայ քն- նադատին ամեն կարծիքը լուծեամբ միայն դատապարտել կամ ընդունիլ . ուստի լաւ համարեցանք առանձին ու- սումնաթերթիւ հրատարակել ամբող- ջովին յուսումն սիրաբանից և 'ի խու- ղարկութիւն քննասիրաց :